

1953

84

7-68

№ 20 03

84-3

7-58

ԲԵՐԼԻՆԻ  
ՊԱՇԱՐՈՒՄԸ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱԼՅՕՆՍ ԴՕԴԷԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ

Ի. Ն. ՍԿՈՐՆԻՐՈՎԻՍԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ  
1890.

442

84-3

7-68

uy



7922

Բժիշկ Վ.....ի հետ միասին Ելիսեան դաշտերով անցնելիս, մեծ ուշադրութեամբ զննում էինք ուսմքերով ծակոտած պատերը, գնդակներով տեղերից շարժած սալայատակի քարերը, և կարծես թէ պաշարման այս համր վկաներից էինք ուզում իմանալ Պարիզի տխուր պատմութիւնը: «Աստղեր» կոչուած կամարին գեռ չը հասած, բժիշկը կանգ առաւ և ցոյց տալով հարեան մեծ տներից մէկը, ասաց ինձ.

— Տեսնում էք վերևում պատշկամբի վրա այն չորս փակ լուսամուտները: Անցեալ տարուայ օգոստոսի սկզբներում, օգոստոսի, որ յայտնի է զանազան փոթորիկներով և դժբաղդութիւններով, ինձ հրաւիրեցին այնտեղ մի կաթուածահար հիւանդի մօտ: Հիւանդը առաջին կայսրութեան հեծելազօր գնդապետ Փոփս էր: Եբրեւ ազգասէր, նրա ուշքն ու մտքը Պրանսիայի մշտական փառքն էր, և երբ որ

օխտուեցաւ պատերազմը, նա տեղափոխուեց  
 Երեւան դաշտերը, ահա այս պատշկամբով  
 բնակարանը... և ի՞նչ էք կարծում, ի՞նչու հա-  
 մար, նրա համար, որ ականատես լինի մեր  
 զօրքերի փառաւոր վերադարձին...: Խեղճ ծե-  
 րունի: Ասելով Վիսասնբուրգի պարտութիւնը,  
 նա ուշաթափ վայր ընկաւ: Աս հանդիպեցի  
 այդ ծեր հեծեղազօրին գորգի վրա փռուած:  
 Նրա երեսը կարմրած էր և անշարժ, կարծես  
 մէկը խփած լինէր նրա գլխին: Պառկած նա  
 շատ մեծ էր թւում: Երևի բարձրահասակ էր:  
 Չնայելով իր ութսուն տարեկան հասակին,  
 ըստ երևոյթին ծերունին կարծես վաթսուն  
 տարեկանից աւելի չէ լինէր. նա գեղեցիկ էր,  
 ունէր սպիտակ ատամներ և գեղեցիկ սպիտակ  
 մազեր: Նրա մօտ չոքած էր նրա փոքր թո-  
 ոք և աղի արտասուք էր թափում: Թոռը  
 շատ նման էր իր պապին: Նրանց միասին տես-  
 նելիս, կարելի էր ասել, թէ գրանք երկու  
 յունական գեղեցիկ մեղաքներ էին միեւնոյն կա-  
 ղապարում ձուլած, բայց թէ մէկը աւելի հին

էր, փչացած և խաղաղած եղբներով, իսկ միւսը  
 փայլուն էր, կարծես նոր էր ձուլուած:

Երեսայի վիշտը սիրտս շարժեց: Նրա հայ-  
 րը, որն սպայ էր, գտնուում էր Մակ-Մա-  
 գօնի գլխաւոր բանակում: Երբի գրութիւնը  
 ահ էր գցում երեսայի սիրտը. ես թէպէտ աշ-  
 խատում էի նրան հանգստացնել բայց ինքս  
 յոյս չ'ունէի հիւանդի առողջանալուն. ծե-  
 րունու կաթուածը այնպիսի կաթուածներից  
 էր, որից դժուար է ազատուել ութսուն տա-  
 րեկան հասակում: Աւ յիրաւի, երեք օրուայ  
 ընթացքում հիւանդը գտնուում էր միեւնոյն  
 անշարժ և անզգայ դրութեան մէջ: Ահա այդ  
 ժամանակ Պարիզում ստացուեցաւ Ռէյխս-  
 հօֆֆէնի մասին լուրը: Տարօրի՜նակ բան:

Մինչև երեկոյ մենք համոզուած էինք, որ  
 յաղթութիւնը մեր կողմն է, հաւատացած էինք,  
 որ քսան հազար պրուսացի սպանուած են և  
 թագաժառանգը գերի է վերցրած: Չը գիտեմ  
 թէ ինչպէս այս ազգային ուրախալի զգացման  
 արձագանքը հասաւ մեր խուլ համր և կա-  
 թուածահար հիւանդին. հէնց այդ երե-

կոյեան նա բոլորովին փոխուեց և ուրիշ մարդ դարձաւ: Աչքերը պարզուեցան, լեզուն բացուեց: Մինչև անգամ նա այնքան ոյժ ստացաւ, որ կարողացաւ ժպտալով և կակազելով երկու անգամ արտասանել:

«Յաղ-թու-թիւն»:

— Այո՛, գնդապետ, ասացի ես նրան, մե՛ծ յաղթութիւն:...

Աւ քանի որ ես պատմում էի նրան Մակ-Մագոնի յաղթութեան մանրամասնութիւնները, նրա երեսը պարզուում էր: Արբ ես դուրս էի գալիս, դռան մօտ պատահեցի գունատ և շփոթուած աղջկանը: Մա լալիս էր:

Ձե՛ որ հիւանդն ազատուած է, ասացի ես նրան, սեղմելով ձեռքը:

Խեղճ աղջիկը հազիւ կարողացաւ ինձ պատասխանել:

— Հէնց այդ ըոպէին յայտնում էին Րէյխս-Հօֆֆէնի կռուի ճիշտ լուրը, այն է, որ Մակ-Մագոնի զօրքը ջնջուել է, իսկ ինքը փախել: Մենք երկիւղով նայեցինք միմեանց երեսին: Մա յուսահատուում էր, մտածելով իր հօր

մասին, իսկ ես դողում էի խեղճ ծերունու վրա մտածելիս: Մհարիկէ, նա չէ կարող տանել այս նոր հարուածը...: Ի՞նչ ասել: Թո՞ղ նեղ արգիօք նրան իր ուրախ և խաբուած դրութեան մէջ, որով միայն կարելի կ'լինի պահպանել նրա առողջութիւնը, բայց այն ժամանակ պէտք էր սուտ խօսել...:

— Ի՞նչ արած, ես կը խաբեմ, պատասխանեց աղջիկը և շուտ սրբելով արտասուքը, ուրախ զէմքով մտաւ պապի սենեակը:

Մա յանձն առաւ շատ ծանր խնդիր, — առաջի օրերը կարելի էր մի կերպ խաբել. խեղճ հիւանդը տկար էր և թոյլ էր տալիս իրան խաբել ինչպէս մի երեխայի, բայց առողջութեան հետ վերագաւնում էր և առողջ բանականութիւնը. հարկաւոր էր ճիշտ յայտնել ծերին զօրքի շարժման մասին և հաղորդել բոլոր պատերազմական նորութիւնները: Յաւալի՛ դրութիւն: Աղջիկն ստիպուած էր նստել օր ու զիշեր Պերմանիայի քարտէզի մօտ, կպցնել փոքրիկ դրօշակներ և հնարել փայլուն յաղթութիւններ: Մագէնը, ասում էր նա պապին,

որը լարած ուշադրութեամբ լսում էր նրան, յաղթութիւն գործեց Ռեյլինի մօտ, Պրուսաստորը Ռաւարիայում, իսկ Մակ-Մագօնը Ռայթիկ ծովը վրա: Աղջիկը միշտ խորհուրդ էր հարցնում ինձանից և ես օգնում էի ինչքան կարող էի: Բայց ամենից շատ մեզ իհարկէ ինքը պապն էր օգնում: քանի անգամ կայսրութեան ժամանակ յաղթել է նա գերմանացիներին. նա նախագուշակում էր ամեն մի շարժումը:

«Այժմ, ասում էր նա մեզ, նրանք կը գնան այսպէս... ահա թէ ինչ կանեն...» և նրա գուշակումները միշտ կատարւում էին, որով ծերունին շատ հպարտանում էր: Բայց չը նայելով այն արագութեանը որով մենք քաղաքներ էինք վերցնում, յաղթութիւններ էինք գործում, այնուամենայնիւ այս նրա համար բաւական չէր: Ծերն անկուշտ էր...: Ամեն օր, դալով նրա մօտ, ես իմանում էի մեր զօրքերի նոր յաղթութեան լուրը:

— Պ. բժիշկ, տիրած ասում էր ինձ աղջիկը պատահելիս, մենք գրաւեցինք Մայն-

ցը, իսկ դռան յետեւից լսում էր ծերի ուրախ ձայնը.

— Պործը առաջ է գնում: Ութ օրից յետոյ մենք կը լինենք Ռեյլինում:

Այն ինչ իսկապէս պրուսացիներին Պարիզ հասնելու համար մտում էր ութ օրուայ ճանապարհ...: Մենք մտածում էինք, արդեօք լաւ չէ՞ր լինի տեղափոխել ծերունուն զաւառներից մէկը, բայց Պարիզից դուրս լինելով, նա անշուշտ կը հասկանար Պրանսիայի իսկական դրութիւնը, իսկ թոյլ տալ նրան յանկարծ իմանալ բանի էութիւնը՝ դժուար էր, քանի որ ես նրան անպատրաստ էի համարում և այդ պատճառով մենք վճռեցինք մնալ:

Պաշարման առաջին օրը, ինչպէս մտաբերում եմ, գնացի նրա մօտ սաստիկ յուզուած: Ես տանջւում էի, ինչպէս և ամեն Փրանսիացի, տեսնելով քաղաքի փակած դռները. ես գիտէի, որ կռոււմ են քաղաքի պատերի տակ, որ այդ պատերն են մեր սահմանները:

Իւրանդն ուրախ նստած էր մահճակալի վրա: — Միթէ՞ ձեզ յայտնի է, գնդապետ:

— Այո՛, բժիշկ, ընդհատեց ինձ թոռը...  
Պա երևելի նորութիւն է... Բերլինի պաշա-  
րումն սկսուեց:

Աղջիկն ասում էր այդ խօսքերը հանգիստ,  
հանդարտ, առանց ընդհատելու իր գործը:

Բհարկէ ծերունին չէր կարող հասկանալ  
թէ Պարիզն է պաշարում: Ամրոցի թնդա-  
նօթների ձայնը չէր հասնում նրա ականջին:  
Նա չէր տեսնում անբաղդ, անհանգիստ և  
մռայլ Պարիզը: Նա իր անկողնուց կարողա-  
նում էր տեսնել միայն յողթութեան կամարի  
մի մասը: Նրա սենեակը զարդարած էր առա-  
ջին կայսրութեան ժամանակուայ զանազան  
իրերով և առարկաներով, որոնք վառ էին պա-  
հում նրա երևակայութիւնը և աւելի էին  
նպաստում, քան մեր բոլոր աշխատանքները, որ  
քաջ գնդապետը միամիտ հաւատար Բերլինի  
պաշարմանը:

Այդ օրուանից մեր պատերազմական գոր-  
ծունէութիւնը շատ թեթեացաւ: Բերլինի պա-  
շարումը դարձաւ ժամանակի հարց: Նրբ որ  
ծերը շատ տխրում էր, նրան կարգում էին

որդու նամակը, իհարկէ հնարած, որովհետև  
առաջին՝ ոչ մի լուր չէր հասնում Պարիզ և  
երկրորդ՝ Սեդանից յետոյ Մակ-Մագոնի թիկ-  
նապահը ուղարկուած էր Պերմանիայի ամրոց-  
ներից մէկը: Պարող էք երևակայել խեղճ աղջ-  
կայ յուսահատութիւնը: Չ'ստանալով իր հօ-  
րից ոչ մի տեղեկութիւն և կարծելով որ նա գե-  
րութեան մէջ զբոսուած է ամենամահաբաժնա-  
ներից, կարկի է հիւանդ էլ է, ստիպուած էր հնա-  
րել ուրախ և կարճ նամակներ, որը կարող է գրել  
սպան պատերազմի ժամանակ միշտ առաջ գնա-  
լով նուաճած երկրում: Նրբեմն հայրը տկա-  
րանում էր և ամբողջ շաբաթներով հօրից նա-  
մակ չէր ստացուում: Խեղճ ծերը անհանգիստ  
լինելով գիշերները չէր կարողանում քնել: Այդ-  
պիսի դէպքերում իսկոյն նամակ էր գալիս  
Պերմանիայից և աղջիկն ուրախութեամբ կար-  
դում էր հիւանդին, հագլև կարողանալով զսպիւ  
արտասուքը: Վնդապետը յարգանքով և ժպտա-  
լով լսում էր նամակի բովանդակութիւնը, դո-  
վում էր, երբեմն էլ քննում և բացատրում էր



մեզ մութ կէտերը: Հետաքրքիր էին նրա պատասխանները որդուն:

— Նրբէք չմոռանաս, որ դու Փրանսիացի ես, գրում էր ծերը նրան, եղիւր ներողամիտ դէպի թշուառ գերմանացիները, մի ծանրաբեռնիր նրանց մեծ հարկերով...:

Մրանից յետոյ գալիս էր մի ամբողջ շարք խորհուրդներ սեփականութեան, կանանց յարգելու մասին և այլն: Այսպէս ծերը յիշեցնում էր որդուն յաղթողն պարտականութիւնները դէպի դժբաղդ յաղթուածները, յաղթութեան պայմաններում նա շատ պահանջող չէր:

— Պատերազմական ծախսերի հատուցումն և ուրիշ ոչինչ: Ի՞նչ հարկաւոր է գաւառնիր խլել: Միթէ՞ կարելի է Պերմանիան Պրանսիա դարձնել:

Նա այս բոլորը թելադրում էր այնպիսի վճռողական ձայնով, նրա խօսքերը արտայայտում էին այնպիսի անկեղծութիւն և հայրենասիրական զգացմունք, որ չէր կարելի լսել նրան առանց յուզուելու:

Իսկ պաշարումն առաջ էր գնում, պաշա-

րումը ո՛չ թէ Ռերլինի, այլ Պարիզի... Յրաի, ումբարկոծութեան, հիւանդութեան և քաղցի օրեր էին: Բայց մեր հոգսը, աշխատանքը, անգաղար ցոյց տուած փայփայանքը, ո՛չ մի բույժ չէին թոյլ տալիս խաւարելու ծերունու փայլուն յոյսերը: Մինչև վերջը ես կարողանում էի գննել նրա համար սպիտակ հաց և թարմ միս: Իհարկէ միայն նրան էր բաւականանում: Ուրախ և զուարթ նստած էր ծերունին իր անկողնում, անձեռոցիկը կուրծքին կտպած, իսկ նրա մօտ հոգսերից և զրկանքներից զուստուած թոռը, նա ուտեցնում էր պապին համեղ կերակուրներ, որ դժուար էր գտնել պաշարման ժամանակ: Նախաճաշից յետոյ, ծեր հեծելազօրը, կերակրով զուարթացած, տաք սննեակի մէջ փակուած, մտաբերում էր իր հիւօիսային արշաւանքները և շատ անգամ պատմում էր Ռուսաստանից հեռանալը, երբ նրանք ստիպուած էին կերակրուել ձիու մսով և սառած պաքսիմատներով:

— Հասկանում ես, որդիակ, մենք ձիու միս էինք ուտում:

Արծեմ որ աղջիկը լաւ էր հասկանում. արդէն երկու ամիս էր, որ նա բացի ձիու մտից ուրիշ ոչինչ չէր կրել...: Մինչդեռ ծերը փոքր առ փոքր առողջանում էր, մեր դրութիւնն օր ըստ օրէ աւելի դժուարանում էր: Սկզբում ծերի տկարութիւնը հեշտացնում էր մեր դերը, բայց քանի որ նա առողջանում էր, մեր դրութիւնն աւելի և աւելի դժուարանում էր: Արդէն երեք թէ չորս անգամ սթափուել էր նա Մալիս դռան մօտ արձակուած թնդանօթների ձայնից: Մենք ստիպուած էինք հնարել դարձեալ մէկ, բայց վերջին յաղթութիւն, որը իբր թէ դործել էր Բազէնը Բերլինի մօտ և այդ պատճառով թնդանօթներ էին արձակուում: Մէկ անգամ մենք մօտեցրինք ծերունու մահճակալը լուսամտտին, սա հինգշաբաթ օր էր, Բուցինվալի սօնի օրը, նա իսկոյն տեսաւ ազգային հեծկազօրքը, որ հաւաքուել էր «Մեծ Օօրք» կոչուած տափարակում:

— Այս ի՞նչ զօրք է, հարցրեց բարի ծերունին, վառ օգնութիւն է, վառ օգնութիւն: Նա էլ ոչինչ չ'աւելացրեց: Մենք տեսանք,

որ այդ օրից սկսած աւելի պէտք է զգոյշ լինել, բայց տարաբաղդաբար չ'կարողացանք այդ անիջ:

Արուսացիների Պարիզ մտնելուց մի օր առաջ, անհանգիստ երեխան հանդիպեց ինձ հետեալ խօսքերով.

— Վաղը նրանք ներս են մտնելու:

Նրևի ծերի սենեակը բաց էր, որովհետև երբ էս ներս մտայ, իսկոյն նկատեցի, որ նրա դէմքը մի տեսակ արտայայտութիւն է ստացել: Արելի է նա լսեց մեր խօսակցութիւնը: Բայց մենք խօսում էինք պրուսացիների մասին և ոչ Ֆրանսիացիների, որոնց Պարիզ մտնելուն նա անհամբեր սպասում էր: Ծերունին երևակայում էր Մակ-Մագօնին փողոցներով անցնելիս, ծաղիկների մէջ կորած, չորս կողմը փողը հնչելիս, իսկ նրա կողքին իր որդուն և վերջապէս իրան, պատշկամբի վրա, իր համազրեատը հագին. նա երևակայում էր, թէ ինչպէս ինքը շնորհաւորում է զնրաներով ծակոտած և վառօդից սեւացած արծուանիշ դրօշակները...:

Խեղճ ծեր ժող: Նա կարծում էր թէ

մենք ուզում էինք խանդարել նրան ներկայ լե-  
 նելու զօրքի Պարիզ մտնելուն, որպէս զի հե-  
 ուու մնայ սաստիկ յուզմունքից, հէնց այդ պատ-  
 ճառով նա իր մտադրութիւնը ծածուկ էր պա-  
 հում: Միւս առաւօտ, երբ պրուսացիների  
 զօրաբաժինը գնում էր Մալիօ դռներից դէպի  
 Տիւրլլըւի, վերեւից կամաց բացուեց լուսամուտը  
 և գնդապետը դուրս եկաւ պատշկամբ: Նա  
 գլխին ծածկած ունէր սաղաւարտ, հագած էր  
 զանր զրահ և Միլօի ժամանակուայ հեծելա-  
 զօրի հին, բայց փառաւոր համազօրս: Մինչև  
 այժմ չեմ կարողանում հասկանալ թէ այն  
 ի՞նչ կամք էր, այն ի՞նչ կեանքի հոսանք էր, որ  
 նրան ոտքի կանգնեցրեց: Անկասկած պատշ-  
 կամբի վրա կանգնած ծերունին զարմացած  
 էր մնացել ժողովրդի բացակայութեան, Պա-  
 րիզում տիրող լուրթեան և փակ պատուհան-  
 ների վրա: Պարիզը մի սարսափելի հիւան-  
 դանոցի էր նմանում: ամեն տեղ կախած էին  
 դրօշակներ, բայց ի՞նչ տեսակ սպիտակ, վրան  
 կարմիր խաչ, իսկ զինուորների առաջը ոչ ոք  
 չէր գնում:

Մի րոպէ նա կարող էր կասկածել, արդեօք  
 ինքը չի՞ սխալուում:

Բայց ոչ: Այնտեղ՝ յաղթութեան կամարի  
 յետեւից մի անորոշ ձայն էր լսում: Հաւա-  
 խօսին արդէն հեռուում երևաց մի ինչ որ սև  
 շարժուող զիծ: Յետոյ փոքր առ փոքր փայ-  
 լեցին սաղաւարտների ծայրերը, թնդացին իեն-  
 նական փոքրիկ թմբուկները և «Աստղեր»  
 կամարի տակից՝ ծանր քայլերի և թրերի ձայնի  
 հետ, լսելի եղաւ Շուբերտի յաղթական մարշ:

Այն ժամանակ մեռելային լուրթեան մէջ  
 լսելի եղաւ մի ձայն. «ի զէ՛ն, 'ի զէ՛ն,  
 պրուսացիները...»: Եւ առաջին կարգի չորս հե-  
 ծելազօրը տեսան, թէ ինչպէս վերևում՝ պատշ-  
 կամբի վրա ծերը տատանուեց և վայր ըն-  
 կաւ: Այս անգամ նա մեռած էր:



*[Faint, mirrored text, likely bleed-through from the reverse side of the page]*

ԳԻՆՆ Է 2 ԿՕՊԷԿ

1953

2013

